

# Armenian Church Of Our Saviour

Ա. ՓՐԿԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ



Լիւր բաշխութ  
 Տեղ սպառնել  
 Ֆրանք ամերիկա  
 Դաշտ պայման  
 Ռազմ աջակցութ

Փետրուար 8, 1977

**Գերաշնորհ**  
 S. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
 Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
 Նիւ Եղբայր

Սիրելի Սրբազն Հայր,

Այսու կուգանք յայտնել Զերդ Սրբազնութեան թէ եկեղեցւոյս  
 տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ Թունուար 26, 1977  
 Գորեքշաբթի երեկոյեան 53 անդամներու ներկայութեան: Եկեղեցւոյս  
 տրատու անդամներու թիւն է 525: Կիրակի, Թետրուար 20ին, տեղի  
 ունեցաւ քուէարկութիւնը 183 տրատու անդամներու մասնակցութեամբ  
 իբրև շարունակութիւն Թունուար 26ի ժողովին:

Օրինաւոր կերպով կատարուեցաւ ընտրութիւնը Ծխական Խորհուրդին,  
 Թեմական Պատգամաւորներուն, Հաշուեքննիչ Թանձնախումբին եւ  
 Ընտրողական Թանձնախումբին: Ծխական Խորհուրդի նորընտիր անդամներն են  
 Տիարք Ֆրէնսիս Նաճարեան, Ճէրի Ստեփանեան, Լեւոն Խաչատրւեան,  
 Ղազար Ղազարեան եւ Թորգոմ Պօյանեան, իսկ անձնափոխանորդ էնտրիւ  
 Սրապեան:

Համաձայն Զերդ Սրբազնութեան նոյեմբեր 1, 1976 թուակիր թիւ  
 367 շըշաբերականին, Ներփակ կը գտնէք եկեղեցւոյս տարեկան  
 տեղեկագիրներու գրքոյթը, ինչպէս նաեւ Ծխական ժողովի ընտրութեանց  
 արդիւնքը, ընտրութեանց քուէաթուղթին օրինակ մը թեկնածուներուն  
 անուններով եւ ստացած քուէներով, Թեմական պատգամաւորներուն  
 անունները եւ Հասցէները, Եկեղեցական կազմակերպութեանց Վարչական  
 մարմիններու ատենապետներու անունները, Հասցէները եւ Հեռաձայնի  
 թիւերը, Առաջնորդարանին ղրկուած տպագրեալ տեղեկագիրները, Ծխական  
 ժողովի ատենապետներիւնը, ծխական ժողովին ներկայացուած ել եւ մտական  
 հաշուեկշիռը եւ անդամներուն ղրկուած հրաւիրագրէն օրինակ մը:

Յանձնելով Զերդ Սրբազնութեան թեմական գործերուն կատարեալ  
 թեան կ'սպասենք Ծխական Խորհուրդի ընտրութեանց Վաւերացման:

Մաղթելով Զերդ Սրբազնութեան թեմական գործերուն կատարեալ  
 յաջողութիւն ի Տեառն,

Սնամք խոնարհաբար աղօթակից  
 Եղիշե մրգ կից կից  
 Եղիշե Ս. Վրդ. Գիգիրեան, Հովիւ եւ  
 Նախագահ Ծխական ժողովի

